Արագածոտնի մարզի Հացաշեն գյուղը սնող մ/ճ գազատարի վթարային հատվածի վերատեղադրում

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ Ո Ւ Ն

Ուղեգծի ինժեներա-երկրաբանական պայմանների մասին

1. Հետազոտվող տարածքը գտնվում է Արագածոտնի մարզի կենտրոնական մասում: Տեղանքը մեղմ թեքությամբ ուղղված է դեպի հարավ: Ուղեգծի վերանորոգվող հատվածը գտնվում է Ցամաքասար գյուղի տարածքում, վերջինիս հարավային արվարձանում: Ուղեգծի բացարձակ նիշերը կազմում են 1586-1603մ, վերականգնվող հատվածի երկարությունը կազմում է 1255 մ:

2. Կլիմայական տեսակետից տարածքը գտնվում է ՀՀ «Ցուրտ» գոտում: Օդի ջեմաստիճանը տատանվում է -26^0 C +36^0 C սահմաններում: Տարեկան մթնոլորտային տեղումները կազմում են 451 մմ: Ձմռանը գերակշռում են հարավ-արևելյան, ամռանը՝ հյուսիսային ուղղության քամիները:

Գրունտի սառեցման խորությունը կազմում է 90 սմ:

3. Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է հրաբխային սարահարթի փեշերին:

4. Երկրաբանական տեսակետից տարածքը գտնվում է նեոգեն-պլեյստոցենի հրաբխային հզոր հաստվածքների վրա, որոնք իրենց հերթին տեղադրված են նեոգենի տերրիգեն գոյացումների վրա:

5. Ուղեգծի գրունտները, խողովակաշարի տեղադրման խորության վրա, ներկայացված են հետևյալ տարատեսակներով.

ՊԿ 0+00 մինչև ՊԿ6+00

0.0-2.0 ավազակավ թեթև, կիսապինդ թանձրության, մանրախճի պարունակությամբ՝
2.0 10-30%:

ՊԿ6+00 մինչև ՊԿ6+80

0.0-2.0 խիճ խոշոր, տուֆից, արմատական, մանրախճի պարունակությամբ և
2.0 ավազակավային լցանյութով՝ 10-20%: Վերջինս պինդ թանձրության է

ՊԿ6+80 մինչև ՊԿ12+55

0.0-0.4 հողաբուսական ծածկույթ
0.4

0.4-2.0 ավազակավ թեթև, պինդ թանձրության, մանրախճի պարունակությամբ՝
1.6 10-30%: